600.0118.23.04.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2019 թվականի №118Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի №162Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ԳՈԼԴ ԷՔՍՏՐԻՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2011 թվականի ապրիլի 6-ի «ԳՈԼԴ ԷՔՍՏՐԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №162Ա որոշմամբ «ԳՈԼԴ ԷՔՍՏՐԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №0928 թույլտվությունը,

բ) ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

գ) Հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 20-ի №253Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2018 թվականի հունիսի 20-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 206 213 (երկու հարյուր վեց հազար երկու հարյուր տասներեք) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) ընկերությունը 2019 թվականի ապրիլի 5-ի գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ ընկերությանը տրամադրված թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

է) ընկերության՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով պարտավորությունը 2018 թվականի հունիսի 21-ից մինչև 2019 թվականի

ապրիլի 5-ն ընկած ժամանակահատվածի համար կազմել է 245 775 (երկու հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր յոթանասունհինգ) դրամ, և

հիմք ընդունելով օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը և հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 6-ի «ԳՈԼԴ ԷՔՍՏՐԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №162Ա որոշումը:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականության օգտագործման №0928 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով 2018 թվականի հունիսի 21-ից մինչև 2019 թվականի ապրիլի 5-ը հաշվարկված 245 775 (երկու հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր յոթանասունհինգ) դրամ պարտքը:
3. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է.
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
23 ապրիլի 2019թ.